

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան դիմել 10 րուբ, կես տարվանը 6 րուբ:
Ստանդարտ համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մեջ:

Օտարապետների հիմունք են ուղղակի
Բաժանարար. Редакция «Маска»

Խմբագրատանը բաց է առաջօրե 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարություն ընդունվում է ամեն լիցիտով:

Գնորդարարությունների համար. գնումներ են
խոստանալիս քսոն 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Հրապարակում ենք:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ
Համակ Մոսկովայից: Նամակ խմբագրին, Ներ-
քին լուրերը:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, «Մա-
սկովայի» էֆեթար լրագրի յոթուածը:—ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ:—ՑԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ: Կրթական ուղղություն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրատանը ենք մեր «Մշա-
կի» թե անցել և թե այս տարվա բա-
ժանորդներին շուտով հասցնել մեզ իրանց
վրա մնացած ապանիները:

ՀՐԱԽՐՈՒՄ ԵՆՔ

Մեր ստացած տեղեկություններին հա-
մեմատ վեհապառ կաթողիկոսը անյուսայի
դրութեան մէջ է: Նամակագրիներին ոմանք,
որպէս հաստատ տղերից հարգութեամբ են
որ վեհապառի հիւանդութիւնը հոգեկան
հիւանդութիւն է: Մանկունին փակված է
պահում կաթողիկոսին, ոչ ոքին ներս չէ
թողնում: Նրա սենեակը, որպէս զի ոչ ոք
չիմանայ թե նա հիւանդ է և ինքն, ան-
սահման իշխանութեամբ իշխում է ամ-
բողջ վանքի մէջ:

Այդ դրութիւնը, պէտք է խոստովան-
վենք, բաւական վտանգաւոր դրութիւն է
վանքի, ամբողջ հոգեւոր վարչութեան և
ազգային գանձի համար: Այս դրութեան
մէջ թողնել էջմիածինը նշանակում է ան-
հոգ հանդիսանալ ազգային սեփականու-
թեան վերաբերութեամբ, նշանակում է պա-
տանաւանութիւն լինել ազգի թէ ներկայ սե-
րունդի և թէ ապագայ սերունդների առաջ:

Երբ Մատթէոս կաթողիկոսը հիւանդա-
ցու, Թիֆլիսից անյապաղ պատգամաւորու-
թիւն ուղարկվեցաւ: Էջմիածին, ազգային
գանձը, ազգային սեփականութիւնը այլ և

այլ պատահարներից ապահովելու համար:
Թիֆլիսը, որպէս Անդրկովկասեան հայու-
թեան կենտրոն, մեր կարծիքով պարտաւոր
է նոյնն անել և այժմեան հանգամանքնե-
րում: Եթէ Թիֆլիսի ինտելիգենցիան չը
հաւաքվի, չը համոզի տեղիս հայ հաս-
րակութեանը շուտով իրանից պատգամաւոր-
ներ ընտրել և ուղարկել էջմիածին, —նա
մեծ յոնցանք գործած կը լինի: Պէտք է
պատգամաւորներ ուղարկել, որոնք մի կող-
մից համոզվելով բժշկներին միջոցով թէ ինչ
տեսակ հիւանդութիւն է վեհապառի հի-
ւանդութիւնը, միւս կողմից հաշիւ պա-
հանջելով Մանկունեց, պէտք է մեր կար-
ծիքով մնան էջմիածինում մինչև որ կաթո-
ղիկոսը առողջանայ:

Բայց եթէ, ինչպէս մեզ հաղորդում են,
վեհապառի առողջանալու վրա յոյս չը կայ,
պատգամաւորները պէտք է իրանց ձեռքը
դնեն վանքի բոլոր գանձերն ու հաշիւները
որպէս զի վանքի դրութեան մասին հաշիւ
տան ազգին:

Հրապարակում ենք, որքան, Թիֆլիսի հայ
հասարակութեանը անյապաղ պատգամա-
ւորութիւն ընտրել և ուղարկել էջմիածին,
եթէ ոչ կարող է ուշ լինել և երբ որ ազ-
գը կուզենայ տեսնել վանքի հաշիւները, —
կարող է պատահել որ ազգի ամբողջ սե-
փականութիւնը արդէն վատնված կը լինի
զանազան Մանկունիների ձեռքով:

Եթէ մի որ և է ներսիսան դպրոցի մէջ,
որտեղ հոգաբարձուները բոլորն էլ բարձր
ուսում ստացած մարդիկ են, առանց ժողո-
վրդի վերահսկողութեան փողերը հազար-
ներով կորչում են գանձարանից, կարող էք
երեւակայել թէ ինչ է կատարվում էջմիած-
նում վեհապառի անյուսայի, օրհասական
հիւանդութեան ժամանակ:

Ամեն բան կեղծաւորութիւն է մեզա-
նում: Երբ որ ամենաշնչին վերանորոգու-
թիւն եւ առաջարկում լուսաւորչական եկե-
ղեցու մէջ, —ամենքը, նոյն իսկ ներսիսան
դպրոցի հոգաբարձուների պէս մարդիկ, ու-

րոնք վատնում են հազարներ, իսկոյն սկը-
սում են աղաղակել. «եկեղեցուն չը պէտք
է դիպչել, նա ազգի նեցուկ է»:

Բայց մի և նոյն ժամանակ այդքան ան-
հոգ և անտարբեր կերպով վերաբերվելով
դէպի էջմիածին, այդ ազգային գանձարա-
նի անխնամ դրութիւնը, —ինքն ազգը և
նրա լուսաւորված մասը պայտուցանում են
որ ոչինչ: Նշանակութիւն չեն տալիս եկե-
ղեցուն: Ի հարկէ պատգամաւորներ ընտրե-
լու ժամանակ չը պէտք է ընտրենք ներ-
սիսան դպրոցի հոգաբարձուներից, որով-
հետեւ զբաղուել շատ վատ ծառայութիւն
արած կը լինենք ազգին, ընտրելով հաշա-
տաներ այն անձինքներից, որոնք իրանք
չը դիտեն կառավարել այն ազգային գու-
մարը, որ նրանց յանձնված է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Մայիսի 30-ին

Կարդալով «Մշակի» 72 համարում մի յո-
ղուած «Խորհրդաւորութիւններ Լ. ճեմարանի ա-
ռիթմով, մենք» նոյն ճեմարանի վաղմի աշա-
կերաները մեր սեպուհ պարտականութիւն ենք
համարում հրապարակաւ յանդիման կացու-
ցանք հայ հասարակութեանը մեր կարծիքը սյդ
յոյուածի մասին: —Հաւատարմ ենք, որ հայ հա-
տարակութիւնը հասել է այն առաջնային ինք-
նաճանաչութեան ու մտաւորական զարգացման,
որ կարող է արդարացի քննողական աչքով նա-
յել Լ. ճեմարանի վրա և գնահատել նրա արժա-
նաւորութիւնը ու մեծամեծ արդասիքը ազգիս
համար: Թէ և բարձր նշանակութիւնը Լ. ճեմա-
րանի, իբրեւ մի պատկառելի և գրեթէ դարեւոր
հաստատ հիմնարկութեան, կարող չէ պղտորվել
հասարակութեան բարեմիտ անդամների աչքում
մի որ և է ստացել և տղայաւոր յոյուածով,
թէ և ճեմարանը կարծա չէ նոյնպէս և մեր պաշտ-
պանողական ձայնին, բայց, այնու ամենայնիւ,
մենք երախտաճանաչ արտով և արդարացի բար-
կութեամբ լցված, երբեք թոյլ չենք տալու որ
պանծալի հիմնարկութեան ազդեցութեւ գործու-

նէութիւնը երբ և իցէ քողարկվի այս կամ այն
բաւարաններով: Երբ մի շնչին փոխարէն մեր
յարգանաց ու երախտագիտական զգացման առ Լ.
ճեմարանը, այս գրուածովս կամինք վերականգ-
նել ճշմարտութիւնը և բացարձակ ցոյց տալ ճե-
մարանի նշանակութիւնը այն միամիտների ա-
ռաջ, որոնց վրա գուցէ նախնայաց յոյուածը
ունեցել է որ և իցէ ազդեցութիւն: Խօսելով այդ
յոյուածի մասին, մենք կաշխատենք հերքել պ.
յոյուածագրի կարծիքը և նրա առաջ բերած
թիւր փաստերը Լ. ճեմարանի մասին:

Ամենայն մարդ իր խորհրդածութեանց մէջ
ունի իր տեսակետը, որով նա կշռում ու դա-
տում է այս կամ այն առարկան: Այդ տեսա-
կետի զարգացումը անխախտելի կապով կապ-
ված է այն հանգամանաց և պայմանների հետ,
որոց մէջ գտնվում է ինքն մարդը, Հաւանական
է, որ մի և նոյն աղ. պ. յոյուածագիրը, որ-
պէս և մենք ամենքս, դուրս դնելով վերջին ան-
գամ իր ստը ճեմարանի դէմից, լցված էր մի
վեհա պարտականութեան: Գրեցինք, որ հարց-
դելով բարոյական և մտաւորական սկզբունքնե-
րի վեհ գաղափարը, գրեց նրա մէջ զլիսաւոր
հիմնաքարը նրա ապագայ քաղաքական կամ աղ-
գային գործունէութեան ապարկելու: Բայց ապա
մեզանից մի քանի անհատները, ենթարկվելով
այս կամ այն ազդու հանգամանքներին, փոփո-
խում են իրանց հայեացքը և բողբոջում մտա-
նում այն երախտը, որ ունեցել են նրանք Լ.
ճեմարանից: Պարզեց մեր միտքը: Աշակերտը,
ուսարուելով իր ուսման ընթացքը ճեմարանի
մէջ, իբրեւ անգործ և անհմտ պատանի, ուսա-
նելով իսկ քաղաքական հանդիպում է կեանքի և
նրա անխնայ պահանջներին, նա սկսում է մա-
քառել կեանքի ձախտակ: Կայանքների հետ և
վերջ ի վերջոյ ստիպված է լինում յաղթու-
թեան դրօշակը յանձնել իր հակառակորդին—
կեանքը կոտորում է նրան: Այն ժամանակ պա-
տանու վերին իղէանքները, նրա բարի ու աղիւ-
ճգունները և գաղափարները տեղի են նստիւ-
լով և սարսափելի իրականութեան և չը կազ-
մակերպված ու չը ստացած դեռ մի նիւթական
ձեւ, յախտանալով փրատվելով են նրա մասաղ
պրտի մէջ: Այդ մենամարտութիւնը կրում է ա-
մեն միւր իր կեանքի ընթացքում: Բայց մէկին
կեանքը կոտորում է շուտով, իսկ միւսին այս
կամ այն հանգամանքների պատճառով, տալիս է
միջոց մտաւորապէս ամբանալու և այդ միւսը
մտքաւորելու ժամանակ, որքան կարելի է, հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐԻՏԻԿԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Երբ մի որ և իցէ հասարակութեան մտաւորա-
կան կամ անտեսական կեանքի ընթացքում
զգացվում են այս կամ այն կարիք ու պէտքեր,
գաւառական թղթակցի բարոյական պարտաւո-
րութիւն է արձարծել դրանց վերաբերութեամբ
հարցեր լրագրութեան մէջ: Երբ մի որ և իցէ
հասարակութեան բարոյական կեանքի մէջ մուտք
են գործում գանազան ախտեր ու պակասու-
թիւններ, դարձեալ լրագրութեան պարտաւորու-
թիւնն է անխնայ հարուածել այդ ախտերն ու
պակասութիւնները: Ուրիշ կերպ կարող են կար-
ծել միայն մի առանձին հիւանդութեւ մարդասի-
րութեամբ վարակվածները: Բայց տեսնենք թէ
ինչպէս են վերաբերվում, ըստ մեծի մասին, մեր
հասարակութիւնները դէպի այդպիսի յոյուած-
ները:

Առհասարակ այն բոլոր հասարակութիւնները,
որոնք կանգնած են մտաւոր և բարոյական զար-
գացման ստորին աստիճանի վրա, անկարող
են ըմբռնել լրագրութեան կրթողական ոգին:
Քրիստոնեական սկզբունք, կրթական յանդ-
ջամիտ ուղղութիւն չափ բարձր զարգացմանը
են այնպիսի հասարակութեանց հասկացողութեան
մակերեսից, որոնք մինչև ի բուկ թաղված
են շողքորթութեան և հաճոյամոլութեան տղմի
մէջ: Տարաբաղդաբար մեր հասարակութիւնն էլ
պէտք է հաշիւել այսպիսի հասարակութեանց դա-
տակարգին: Յանցանք կը լինէր Ալեքսանդրա-
պոլի հասարակութիւնը բացառութիւն հաշիւել
այսպիսի հասարակութեանց շարքի մէջ:

Գրեցուք թղթակցից հարուածում է այսօր մի
չարտասանի այն բանում որ նա՝ նուիրատու-
թեամբ հաւաքելով մի որոշ գումար՝ այս կամ
այն ընկերութեան օգտին, փոխանակ տեղ հասց-
նելու, հաշուում է իրան սեփականութիւն: Այն
օրուանից նա թղթակցի դիմելով թշնամին մի
Միկայելուն և թղթակցից կառավարական մի
և իցէ պաշտօնատարի կաշառակերութիւնը
կամ նրա գործած այլ դեղձունքները, այնուհետեւ
նա կը որոնէ պատեհ առիթ թղթակցին մի կեր-
պով վատ հասցնելու: Համարձակվում է թղթա-
կիցը ցոյց տալ այս կամ այն հոգաբարձուի

ոչնչութիւնը, այս կամ այն գանձապահ հո-
գաբարձուի կամ երէցիփիլի խաղաղ հաշա-
պանութիւնը, սրբութեւ և լրագրութեան մէջ
նրա հաշիւ անձնութիւնները, — այնուհետեւ
թղթակցից նրանց համար վատ մարդ է:

Ասում եւս, որ երկրագործական արհեստը մեր
գիւղերում մնացած է իր սկզբնական ձեւակեր-
պութեան մէջ, որ հայ գիւղացին թաղված է մի
դժոխային «պիտուութեան» մէջ, գուրկ է բողբո-
վին անտեսանդիտական պայմաններից և ընտա-
նական բարոյութիւնից, որ գիտութիւնը դեռ չէ
թափանցել իր ճառագայթները այդ խաւար
խորշերում: — ԸՋԷ, պատանխանում են հնամոլ-
ները մեր գիւղացիքը դեռ ևս նահապետական
երջանիկ կացութեան մէջ են:

Մատնացոյց է լինում յոյուածագիրը այս
կամ այն ուսումնարանի թերութիւնների վրա,
ստուգելուց և վերաստու գելուց յետոյ այդ բո-
լոր թերութիւնները, դուրս են դալով պարոն-
ներ, այդ բոլոր նկատողութիւնները անուանում
են բարոյաւոր, հանդիսանում են ջատագուցի
և փոխում են մի թանձր վարդապ. ակնյայտի
պակասութիւնների վրա: Եւ այսպիսիները հա-
մարվում են ուսումնարանին քրտացաւ բարե-
կամներ և ուսումնարանի շահերը պաշտպանող
ներ:

Հարկւորաւոր են այսպէս՝ կեղտոտ երեւոյթներ
հասարակական կեանքի մէջ:

Ահաւասիկ համոզմունքից և առողջ գաղափու-
թիւնից դուրի մարդիկ, մարդիկ, որոնցից մի
քանիսին արժան է միայն դեղին տուճը, իսկ
աւելի շատերին անկեղծանքները, մարդիկ, որոնց
համար հասարակութեան ծանր պիտոյքը ոչ թէ
դառնում են նիւթ մտածութեան, այլ իսկի չեն
էլ պատճառում մտածութիւն, մարդիկ, որոնք
իրանց ստանձնված պաշտօնների վրա հասկա-
ցողութիւնը չունեն անգամ, —ընդունում են ա-
ռանց խղճահարութեան այս կամ այն հասարա-
կական պաշտօնը և դառնում են արքանական
կամ բողբոջվին չէզոքներ գործունէութեան առ-
պարկում, կը յանդգնի հարուածել թղթակցից
այսպիսիների հասարակական գործունէութիւնը,
կը դառնայ նրանց աչքի միջի փուշը:

Երեւակայեցէք: Կառավարութեան առաջար-
կութեան համաձայն, գումարվում է քաղաքի
թաղապետական ժողովը, կայացնում է մի հա-
տարական վճիռ՝ կատարել վերջին պահանջը ան-
վերջ պահանջներով, քաղաքում չեղարկան դըպ-
րոցի բացումը վերջապէս հարաւոր անելու հա-
մար: Հասարակութիւնը հաճութեամբ ստորա-
գրում է այդ թերթին: Պատրաստում է և պա-
հանջել 7000 րուբլ գումարը միայն մի քանի

ԱՆՔՔԱՆԴՐՈՒՄՈՐ: ԶԵՆՈՒՄԱՆ ՈՒՆ ՏԵՂԱՅԻ

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Չը նայելով մարտերի առեւտրային տարածքները առաջվայ զինքով կը ծախվին. **ԿՈՆԳՈՒԹԵՅ** 1 ռ. 5 Կ. և 1 ռ. 10 Կ. 40 Կ. չափ, շատ լաւ. **ՄՕՆԻՆԳ** 1 ռ. 20 Կ. և 1 ռ. 40 Կ., հիմնադր. **ԿԱՅՍԱՆԻ** 1 ռ. 60 Կ. և 1 ռ. 80 Կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ** ԹԵՅ 2 ռ. առանց թղթի: Անգլիական թէթովները 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործարարութիւն **ԲԱՐՆԱԲԻ ԹԱՄԲԵՐԸ**, Զոնտերի **ԿՈՂՊԵՔԵՐԸ**, Տուրքի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկտրակտ կախաշօթալի ծախելու համար, որոնք վարկի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան: **ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ** 1 ռ. 65 Կ. և ամենալաւը 2 ռ. 30 Կ.: Վաճառականներին օգտուէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հաշուատ 15 ռ., կոնֆեկաներ հազի զէմ 60 Կ. ֆունտը:

87—100

ԲՈՍՏՈՎ ԳՕՆԻՎԱՐԱՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՏԵՐ ԵՍ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՍՈՎ յայտնում է հետեւեալը. Իմ ծխախոտի արդիւնաբերութեան մեծ պահանջը զրոյեց թիֆլիսի գործարանատէր Պիրաթով և ընկ. և Գալիզովին նմանակ իմ արդիւնաբերութեան ձեւին զանազան անուններով, մանաւանդ „ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ“, „ԳԵՆԵՐՈՎ ԳԵՄԱՆ“ և „ԳԵՆԵՐՈՎ ՍԿՈՒՐՈՎ“: Եւ յախազողուշացեալով իմ ծխախոտը գործածողներին, խնդրում եմ ուշադրութիւն դարձնել իմ ֆիրմայի հետեւեալ նշանների վրա: 1) Հրապարակական հաւանութիւն 1865 թուականի Մոսկովի հանդէսից, 2) Ոսկեայ մեդալ Մոսկովի տեխնիկական հանդէսից 1872 թ., 3) Պատուաւոր կարծիք 1873 թ. Վիեննայի աշխարհահանդէսից, 4) մեծ մեդալ 1876 թ. Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհահանդէսից, 5) Արծաթե մեծ մեդալ 1878 թ. Փարիզի աշխարհահանդէսից, իսկ այդ նշանները չունեցող արդիւնաբերութիւնը ինչպէս Կեղծ ՀԱՄԱՐԵԼ: ՄԱԿԵԴՕՆԻԱՅԻՅ նորերումս ստացայ ամենալաւ ՀՈՏԱԻԷՏ ԾԽԱՆՈՅ: Լաւ յատկութեան ծխախոտ սիրողներին խնդրեմ զիմեյ թիֆլիսի մէջ. Սպիրիդոն Իվանովիչ Պոպովին, Բամազովին, Բայանդուրովին, Միկիտուովին, Բէժանովին, Տէր-Գրիգորեանց և ընկ. և զէպոն, որ զանազան է Գոթլինսկի փողոցի վրա, իշխան Բազարաթիւն-Մուխրանիս տանը: ԱՅԻ ԱՆՁԵՐՔ ՈՒՂԱԿԻ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՐՆԻՅ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ԾԽԱՆՈՅԸ:

Բոստովի 1-ն զիլդիայի վաճառական և ծխախոտի գործարանատէր ԵԱԿՈՎ ՍԵՄԵՆՈՎԻԶ ԿՈՒՇՆԱՐԵՍՈՎ:

1—12

Ն Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՅՅԻԻ

Տպագծ մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 էրկսից: Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „Կենտրոնական գրական-անոցում“, „Կովկասեան գրական-վաճառանոցում“ և Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բոզարջեանցի, Հովսէփեանցի ծխախոտի մագազիններում:

Գինն է 1 ռուբլ 20 Կոպ:

Въ Редаціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Un professeur de français, connaissant parfaitement le français, le latin, le grec (dix ans de professorat), prendrait répétitions ou bien pourrait prendre préceptorat ou leçons pour conversation française et perfection de la langue. Pourrait se charger de faire faire les cours de gymnase à des enfants qui parleraient déjà le français. S'adresser à la rédaction du journal arménien le „Mechak“.

1—5

144 Արծրուշու զաւրէտ 144 ամենախճան պահեստ մեքէլի և հայկիկների:

Արդէն վաճառվում է

ԻՆՉ ԲԱՆ Է

ԺԱՆՏԱԻՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժշկի Պ. Ա. Իլինսկոյ:

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրյանց Գինն է 15 Կոպ. 100-նկրով փողոններին զիլուն կը լինի: Մեր հասցէն՝ Въ Эривань А. Гуламирянцу

Ժողովել եմ, ժողովում եմ և շուտով ի լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրութեամբ „Մագիաբաղ ձայնագրեալ երգարան“ ուստի խնդրում եմ ձայնագրագետներին և այն պարոններին, որոց մօտ գրեւորվում են ազգային երգեր թէ հայկական և թէ եւրօպական ձայնագրութեամբ (նօտաներով) բարեհաճել մինչև յառաջակայ օգոստոս ամիսը ուղարկել ինչ: Երգեր ուղարկողները ազգանունները կը տպագրուին ևրդարանի վերջը և մի-մի օրինակ էլ ձրկապէս կը ստանան: Վարձատրութիւն պահանջողները ևս կարող են իրանց պայմանները յայտնել: Իմ հասցէն: Տիֆլիս, Եղիկ քահանայի երգչիկանց:

8—10

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթուներ և բազկաթուներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատողիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԳՈՍՅԱՆԻ պահեստում:

Օտարաբաղաբացիք կարող են զիմեյ այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

15—150

Արդէն ուշադրեցաւ իւր բաժանորդներին ԲԱՅՅԻԻ „ԽԵՆԹԸ“ անունով փրկաստութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք զիմեյ ՇՈՒՇԻ կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմետ-Յակոբեանցի տպարանը: ԲԱՅՅԻ՝ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՋ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին, Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБЪЛЮ АП-РЪСЯНЦУ.



Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մաքրող ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: Գինը 2 ռ. շերտ, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկած 2 ռ. 49 Կոպ.: ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:

Մի և նոյն տեղը ԽԵՆԱՅԻ ԻԿԸ, մաքրող ամրացնող համար, 1 ռ. ամանը փրձին զիլապաւի զէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտուէտ ջրեր և այլն: 76—100

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ				
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ռ. 5 Կ.	Բոսկիլայից բերվող թէյի հետ	Փ. 1 ռ. 30 Կ.	
—	1 ռ. 10 Կ.	—	—	Փ. 1 ռ. 40 Կ.
—	1 ռ. 20 Կ.	—	—	Փ. 1 ռ. 60 Կ.
—	1 ռ. 40 Կ.	—	—	Փ. 1 ռ. 80 Կ.
—	1 ռ. 60 Կ.	—	—	Փ. 2 ռ.
—	1 ռ. 80 Կ.	—	—	Փ. 2 ռ. 50 Կ.
Ամենալաւը	2 ռ.	—	—	Փ. 3 ռ.

88—100

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները

Մայիսի 22 և 23-ին	Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
25-ից 30-ը	Հաւաքարի Մարիամեան օր. ուսումն.
28 և 29-ին	Կուկու թանգրեան օր. ուսումն.
30-ին	Հաւաքարի Ս. Միհայ եկ. ուսումն.
Յունիսի 1 և 2-ին	Կուկու Ս. Աստուածածին եկ. ուսումն.
3 և 4-ին	Ջրաշէն եկ. ուսումնարաններում.
5-ին	Շամքուկցոց եկ. ուսումնարանում.
6-ին	Չորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
8-ին	Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
9-ին	Չուղուրէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում.

Թեմական վերապատեւ Քարթուզարեանց

ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐ

Տիֆլիսից, մօտ 8 վերստ հեռավորութեամբ, — ԶԱԲԱՐԱՇՆԵՐՈՒՄ, փոքր Լիւլի մօտ, — վրաց Խուլթեայի կէս ճանապարհի վերայ տրվում են վարձով երկու ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐ, իւրաքանչիւրը՝ երեք սենեակից բաղկացած իւրեանց առանձին խոհանոցներով: Գնի մասին կարելի է հարցնել տիրոջը — Զաք. Գրիգորեանցին — նորա գրախանութիւնը:

6—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԻԺԱՆՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կոնֆեկաներ, ԿԱԿԱՍ, բրինձ, ԱՄՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, գզալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, այրածներ, ՄԱՀԱՍԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիֆո, պարուսին, թաշկիւմախներ, երեսորիչներ, կիծակ, գուլլերներ, ԹԱՐԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խեթ, կոնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակութեամբ ՎԱՅԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒՐԻՇ 44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54 ռ., և այլն: Սյր բոլորը կարելի է գտնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մազնեգիլ, խմոր ԾԱՐԱԻՒ զէմ, ԽԵՆԱՅԻ գինի ջերմի զէմ, կարթուս փճիկ, հեղուկ և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ փաթեկիցով տի համար, պարսկական փօշի: 11—100

8—10

ՄԵԺԵՎՈՒ ԻՆԺԵՆԵՐ ՍԷՐԳԷՅ ԻՎԱՆՈՎԻԶ ԲԱԳԱՏՈՒՐՈՎ ընդունում է. կազմել ՅԱՏԱԿԱԳՇԵՐ (պլաններ), գծագիրներ, պրոֆիլներ, կատարում է կալուածների, հողերի և անտառների բաժանումն գնահատողական գիտական հիմունքների վրա, կատարում է ընդօրինակումներ (съемки) և հարթաչափութիւններ (нивелировка) ԲԱԺԱՆՈՒՄ Է ԱՆՏԱՌՆԵՐԸ կանոնադրապէս գործածելու համար, գնահատում է հողերը, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ Է տալիս երկրաչափական և կալուածական գործերի վերաբերութեամբ և մի և նոյն ժամանակ կալուածական գործերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանական, տեխնիկական և անտեսական կողմերից, պատրաստ է որ և է հիմնարկութեան հաւատարմատար լինել կալուածական և երկրաչափական գործերի համար: ՀԱՅՅԷՆ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ թողնել „ՄԵՍԿԻ“ խմբագրատանը:

8—10